65. ԿԱՐՄԻՐ ԵԶՆ ՈՒ Հ'ՈՒԾԱՊ

Կէզնի պապը, կնիկը ու ուրին լէ տղեմ՝։ Առջի կնիկ կմեռնի, ուրիշ կնիկը կբերե ուրին։ Էդ կնկան տղեմ՝ կէզնի։ Ժամանակը կմնա, էդ դամառի կնկան տղեն կէզնի տաս տարեկնեկ, հ'առջի կնկան լէ՝ տրսնուհինգ տարեկնեկ։

Օր բը զօր կնկա տղեն հ'ետ կէրթա, մեկ էլ հ'առջի կնկա տղեն հ'առեջ կիգա։ Խորթ մեր կնախանձի։ Իրկան կըսե.—Հորըմ փոր-ինք, զմըր մեծ տղեն թալինք հ'ինք։

Իրիկ կըսե.—Ինչպե՞ս թալինք, չէ՞ էդի իմ միս ու արուն է, իմ զավակն է, իմա՞լ մարդում՝ ձեռք կբռնե, տանե զուր էրեխեն թալե հոր, սազ-սաղ անոթից սպանե։

Կնիկն կըսե.—Կթալիս թալե, չըս թալի, ես քզի կնկնութեն չըմ էնի։

Մարդ յախա չազադե կնկա ձեռքեն, կէլնա մեծ հորըմ կփորե թավլի մեջ, կբերին զտղեն թալին մեջ հորուն ու բերան կդնին չաղցի մը քար, մինակ հ'օրթոլախ մեծ ծակըմ կթողին, օր օրա-կան մեկ-մեկ գլգլե հաց բերին, թալին, անոթից չմեռնի ու կթոր-կին։ Տղի խավլն էն էր օր քառսուն օր էդ հորու մեջ պիտի մներ, Կարմիր եզն էր, հար մըկա, էկեր մեկ հեղ զկոտոշ կհ'երկնցներ տղեն ծծեր, հ'օրես բաց էրկու հեղ կբերեր կհ'երկնցեր զուր կոտոշ հորու մեջ, տղեն կծծեր, կթողեր կէրթեր։

Էդ եղան կոտոշի մեջ մեղր էր լցուկ։ Մնաց օր քառասուն օր օր թմավ, էկան էդ աղի դամառի մամն ու պապն քար տվին մեկ դին, կեռան հորու վրեն։

Ըսին.—Օվսեան, զքզի ինչո՞վ քաշինք հանիք հորու միշեն։

Ըսավ.—Գացե՛ք, էրկու եզ բերեք, գուլթնի զնճիլ թալեք իմ մեշք, քաշեք, հանեք։

Էն գահ օր թալեցին զգուլթնի զնճիլ, քաշեցին զտղեն հանեցին դուրս, ակյար տղեն հ՚առջին հեղ մեկ խըլավ էր, դարձեր էր էրկուս։ Քիթ ու բերան էղեր էր զթեփսիմ՚ մըն էր, թև պիտեր օր հ՚իգեր վըր իդոր բլակներուն, դու գիներ առուծի էր կաթ կերի։

Դամառին հարցուց տղից, ըսավ.—Էդ քու տեղ ի՞նչ կեր օր դու էդ խըդար խորոտըկցար ու խըլավցար։

Տղեն ըսավ.—Ըն տեղ օր ես մտա, անմահութենի դրախտն էր։

Կնիկ իրկան ըսավ.—Զիմ տղեն լէ կթալիմ ըդ հորու մեշ, թըղ էրթա խըլավնա ու խորոտկնա։

Կէլնա, կբերե զուր հալալ տղեն լէ կթալե ըդ հորու մեշ։ Կթալե հորու մեջ, օրական իրեք հեզ անուշն ու չանուշ կբերե կիշու հորու մեշ, օր տղեն ուտե։ Կարմիր եզ թանբիհ կընե տավըրներուն ամբողջին, նը՛ դուրս կթրքիք, նը՛ կշռիք, հ՚ըմենքդ կիգաք իգա ծրկեն կթրքիք ու կշըռիք։ Կմնա ժամանակըմ, կէրթան պապն ու մամ վըր ըդ հորու բերնին։

Կասին.—Տղա՛, քի ինչո՞վ հանիք դուրս։

Տղեն կասե.—Մարե՛, զիս դողու թելով թալ քաշե վի, էն լէ դու մինակ կքաշիս կհանիս օր չմեռնիմ։

Մամն օր զտղեն հորու միշեն կքաշե կհանե դուրս, կտեսնա օր էղեր է տարվան մեռել, խուտում չոքերուց հետ կկոտրի։

Կըսե.—Էղնի՛, չէղնի ըդի Կարմիր եզան բաներն է։

Ըդ հախս ինք քըրբուն կհիվընդնա, կիգա պառկի։ Տղեն լէ մեռելի օրինակ էղեր էր ղաթի, կբերե ուր կշտի հետ պառկցու։ Կիշե իրիկ դռնեն էկավ, կըսե.—Օր դու զԿարմիր եզ չմորթիս, մենք ուտինք զէնդոր միս, մզիկ սաղնալ չկա։

Իրիկ կըսե.—Կնի՛կ, ես ու ըդ մեկ եզնուկն իմ, իմա՞լ մորթիմ զըդա եզ։

Կնիկ կըսե.—Անկարելի՛ բան է, դը մորթիս, թե օր չմորթիս, մենք կմեռնիք. յա՛մ էն է մինե կընցնիս, յա՛մ էլ՝ Կարմիր եզան մոտեն կընցնիս։

Մարդու ճար կկտրի, կըսե.—Հ'իրկուն եզ թըղ գա նախրից, մորթիմ։

Ըգ խոսքի մեջ կէղնին, թավակալի տղեն դռնեն կիգա ներս, կիշե տեսնա, օր կարմիր եզան բաս կէնին։

Տղեն կէրթա կնստի կարմիր եզան մսուր ու զձեռք կդնե հ'երսին, կիլա, եզ հ'իրկուն նախրից կիգա, կտեսնա օր տղեն արնե արտսունք կթափե, կսկուծ-կսկուծ կիլա։

Կըսե.—Հ'որի՞ կիլաս։

Տղեն կըսե.—Իմա՞լ չիլամ, կնիկն ու տղեն հիվընդցացին, խոսքերնին մեկ ըրած ին, օր քի մորթին, իմ ումուդ օր կա՝ դու իս։

— Հեյ,—կըսե,—կտրի՛ճ, դու մը՛ վախենա, մարդ զիս չկառնա մորթե։ Հ'էլի գնա կոտրմ քըլսե ալուր բի, կոտրմ լէ խիճ ու ավազ։ Օր ըսավ քու պապ՝ ըդ ի՞նչ է կէնիս, ըսե՝ մըր եզ ամակտար կըլնամ. մըր եզան գլխոք ու օտվընոք, հանգիստ, կակուղ էղնի տեխ, չընկնի քարերուն, տեխ չցավա։ Էն գահն օր զիս բերին ըդ է օր կմորթին, ինչ լէ ընին քզի, իմ խեչ չկանիս, կէլնիս էրթաս գուս։ Քու պապ օր էկավ զիս բերեց, ես բըխո կիգամ, կմղլիմ գետին ու կպառկիմ, ես օր էկա մղլա ու պառկա, էլ իմ օտքեր չկապե։ Կասե. «Իմ եզ բըխո-բըխո էկեր է չախուի հ'առաջ։ Ըդհախս խնդանելուն քու դամառի մամն ու ուր տղեն կէլնին կիգան իմ կուշտ, կնստին. էն գիտնալիք լէ իմն է։

Լուսմութ էր։ Մարդն էկավ տարավ զեզ օր մորթեր, տղեն բերեց զկոտ քըլսն, ղավազն ու զխեճն կես լըցեց դըլխոք, կեսն լէ՝ օտվընոք։

Պապն ըսավ տղին.—Ըդ ի՞նչ է կէնիս։

Տղենն ըսավ.—Աղո՛, չէ ըդի մըր ամակդար եզն էր, հար էսօր զմգիկ ըդի է պահե։

Պապն էր, օր բրոնեց զեղան ականճ բերեց քըլսի ու խճի վրեն, օր զարկեր գետին մորթեր, եզն ինքն ուրեն մղլավ գետին ու զօտներ երկընցուց։

Տղեն թորկեց էլավ դուրս։

Պապն ըսավ տղին.—Լաո՛, հ'որի՞ կէլնիս դուրս, արի՛ դու լէ յարդըմ էրե, ըսկի չէ՝ կրոնիս իդա եզան օտներ, ես կքոթիմ։

Տղեն ըսավ.—Իմ սրտեն չհանե, եզ բան չասե։ Տեխեն չխըտվըտա, դու զգլուխ կտրե, խըլըսի, օր քոթելու էղավ, ես բըխո կիգամ։

Եղ օր պառկավ, պապ զդանակ քաշեց դրեց եզան վզին օր մորթեր, կնիկ ու տղեն խնգանելու ուրանց էլան վազեցին էկան թամաշին։

Ըսին.—Մ՛ըդ, մ՛ըդ մը կարի զգլուխ, հար հ՛իգանք տեսնաք։

Կնիկն ու տղեն օր էկան, մարդ թալեց զչախուն եզան վիզ, օր կտրեր, եզ զկոտշներ ցոնցեց, քիսավ մարդու պտղի մեշ, քոռցավ, օտքերով փեքոլըմ էրեց, զփոշին առավ ու լըցեց մորն ու տդի հ՛առշև։ Առավ ոտներու տակ ու կոտշեց, էրկուա լէ մանցին, տեխ ըը տեխ։

Էնդոնք օր մեռան, եզ էլավ կանավ, հեղըմ ժըժխվավ, փոշին թոթվեց վրավեն ու ընկավ դուրս։

Տեսավ տղեն կանուկ էր դուռ։

Ասեց.—Հա՛յ տղա, դը՛ արի հեծի զիս, էրթանք։

Տղեն հեծավ զեզ ու ընկան ճամբախ։

Շատ գացին, քիչ գացին, իրեք ավուր ճամբախ գացին։ Գացին քընչ օր Մերկ ի Մերու պես* տեղըմ, մեծ բարդի ծառըմ կեր, ռաստ էկան։ Եզ ըսավ.—Հա՛յ տղա, էդա տեղ իջի, իմ տեխն ու քում ըս տեխն է։ Ես զկանչնին արծիմ, դու՝ կի՛ զմեղր, խմե՛ զըդ ջուր, քաշվի, էլի ըդա ծառն ու իշքե։

Մանցին էրկու օր, իրեք օր, մանցին ըդտեղ օրըմ լէ տղեն իշքեց, տեսավ օր ընդիեն քամիմ՝ էկավ։ Ըսավ.—Հա՛յ ախպեր, հոդուկ քամիմ՝ էկավ, հրմ իշե, չէղնի ուրիշ բան էղնի։

Եզն իշքեց, օր ընդիեն ուշապըմ հո՛ւ կէնե ու կիգա։ Էկավ-էկավ մոտեցավ։ Ասեց եզան.—Ես ճրագով քու հ՛ետև կզրվրոնեք, անճրագ հընկար իմ ձեռք։

Եզն ըսավ.—Կե՛ր ու սորա գոհացիր։

Սահաթ էրկուսն էր, եզն ու հ՛ուշապ փաթվան հ՛իրար։ Կռվան մինչև սահաթ վեցին, նը՛ էնի ալթ էղավ, նը՛ էնի։

Հ՛ուշապն ըսավ.—Եզ ախպե՛ր, թող էրթամ ջուր խմիմ հ՛իգամ, սորա դու լէ գնա խմե էկո. հ՛իգանք հ՛իրար։

Օձ է, վերջապես զեզն համոզեց, գնաց վըր աղբրին, օր ջուր խմեր։ Գնաց խմեց, դարցավ էկավ, խաբեց, էլ զեզ չթողեց, օր ջուր խմեր։

---

* Բինգյոլեն վար Ս. Կարապետի լեռներու մեջ մեկ դաշտավայր մըն է (Ս. Բ.)։

Առան հ'իրար, սահաթում՝ չափ կովան, օձ զեզն ալթ էրեց։ Օր ալթ էրեց, թալեց գետին ու հ'ընկավ վրեն։ Մեկ-մեկ լողմա կերավ ու ըսեց.—Օխե՜շ, ի՜նչ անուշ է։

Եզն ասեց.—Ախը՜ր, զիս կերար, իմ ծառ քի ամանաթ էղնի, հ'ուշա՜պ։ Հ'ուշապն օր զեզան ջանդակ կերավ խըլըսավ, ասեց.—Իմ տարին հարիր թըմավ, ես ըդա ավա համով միս չընք կերի։

Հ'ուշապ քաշվավ, օր դը էրթեր, ըսավ. —Ես ի՜նչ խըդար ախմախ իմ էղի, օր ըդոր միս կերա, էդի ընծի թանրիեհմ՝ էրեց, ես չիշքի ծառնըվե։ Ի՞նչ էր օր ըդի կըսեր. «Իմ ծառ քի ամանաթ, հ'ուշա՜պ»։ Ես չիշքեցի ըդոր ծառի վրեն ի՞նչ կեր, չկեր։

Դառձավ հետ։ Իշքեց ծառու գլուխ, տեսավ տղեմ՝ հանդ է, ծառու գլուխ։ Ասեց.—Հա՜յ տղա, դու խուլամ էղնիս ըդ եղան, ես աշխըրքի մեջ ընդոր մսի պես միս չընք կերի, ընդոր խաթրի համար իշի՜, արի՜ իմ շալակ, զբզիկ կէնիմ ընծիկ տղա։

Տղեն հ'իջավ ծառուց։

Հ'ուշապն առավ զտղեն շալակն ու էկան։ Շատ ու քիչ, ի՞նչ էկան, էկան մաղարեմ հ'էլան դուրս։

Հ'ուշապն առավ զտղեն ու մտավ մլարի մեջ։ Ըդ հ'ուշապ յոթն օր կքներ, յոթն օր լէ կմներ հ'արթուն, էն վախտ օր հ'արթուն կմներ, ցերեկներ կէրթեր նեճրութեն կէներ։ Գիշերներ կդառներ կիգեր հետ։ Ըդի հինգ օր տղեն մնաց ըդտեխ, ըդոր պապ քնուկ էր։ Տղեն էկավ պապու վըրեն ֆքրավ, տեսավ, օր խորուն քնու մեջն ա, գնաց էրկու հ'օդի դուռ բացեց, իշեց տեսավ օր ըդ հ'ուշապ զմիս դրեր է խոշու հ'առեջ, զխոտ դրեր է զելու հ'առեջ։

Զէն հ'օդեն թորկեց, էկավ ուրիշ դուռըմ բացեց, իշավ օր ինչ օր աստված ստեղծեր է, ինս ու ճինս, հ'ըմեն լըցուկ ին ըդ հ'օդի մեջ։ Հրեղեն ձի կհարցուս. հավք ու հավորեկ կհարցուս, ի՞նչ օր կհարցուս։

Մ'ըսի, էդոր պապ մախսուս է զէդ դռներ թողի բաց, օր զտղեն փըրովա ընե։ Էկավ ըստ հաղ ուրիշ հ'օդի մը դուռ բացեց, տեսավ, օր հ'ուշապն ջներու հ'առջև բերեր է խոտ դրե, ձիաննու հ'առջև՝ միս։ Զըդ հ'օդեք օր իշքեց, դարձավ էկավ, բերեց հ'առջի հ'օդի դմակ վերուց փոխցեց, դրեց գելու հ'առեջ, զգելու հ'առջևու խոտ դրեց խոշու հ'առեջ։

Էկավ մեկէլ հ'օդեն, փոխցեց խոտ, դրեց հրեղեն ձիաննու հ'առեջ, հրեղեն ձիաննու հ'առջևու միս՝ շներու հ'առեջ, դրեց զդռներ, թողեց էկավ։ Էկավ օր կիգեր հ'ուշպի մոտ, իշեց էդ բա-

կի մեջ յոթ դուռ լէ ուրիշ կա։ Բացեց հ'օդիմ՝ դուռ, տեսավ, օր սադա հադիստ է լցուկ հ'ինք։

Հ'օդիմ՝ դուռ բացեց, տեսավ, օր աղբուրըմ՝ կթալե էդ հ'օդի մեջ, արևու պես կճըրըստա, տարավ զմատ դրեց էդ աղբրի բըբան հ'առեջ։ Ասեց. «Կանի տեսնամ էդա ջուր պաղ է, քիչըմ խմիմ»։ Զմատ օր դրեց բըբան դեմ, կիսեն ու հետ էղավ արծաթ, ինչ էրեց ճըմռեց, չախվով քիրեց վրավեն՝ չէլավ։

Գնաց դուռըմ լէ բացեց, տեսավ հ'աղբուրըմ լէ հոդ կթալե։

Ասեց. «Վուա՜ լլա, էդա հ'աղբրի հ'առեջ կդնիմ զիմ մատ, բալքիմ լվացվի, էրթա»։

Զմատ օր կոխեց էդ հ'աղբրի հ'առեջ, տեսավ էղավ դեղին օսկի, բերեց էլ ճար չդտավ, բերեց քըռջըմ փաթեց վըր մատին։

Ասեց. «Ակյար իմ պապ ախլավ վրեն, կասիմ՝ չախուն կտրիմ»։

Դուռըմ լէ բացեց, տեսավ իրեք օտնեն ձի մը կա հ'օդի. ըդ իրեք օտվնեն ձիու խեչ շունըմ լէ կեր կապուկ, շան հ'առեջ դրուկ էր խոտ, ձիու հ'առեջ՝ միս, փոխդրեց, վերցուց զմիս, դրեց շան հ'առեջ, զխոտ՝ իրեք օտնեն ձիուն։

Դուռըմ լէ բացեց, տեսավ օր իրեք հատ հրեղեն ձի լէ հոդ կա կապուկ, մեկ՝ կարմիր, մեկ՝ սպիտակ, մեկ՝ սև։

Դուռըմ լէ բացեց, տեսավ յապանի մարդ էր լըցուկ։ Ըդ յապանի մարդիկ օր զըդ տղեն տեսան, լալման զուրանք թալին տղի օտաց վրեն։

Ասին.—Ցամա՜ն, քու ջրհելութենի բախդն ինք հ'ընկի, ղմզի ըղա տեխեն ազատիս։

Տղեն ղյոթ հ'օդի դուռ բացեց, աղեկըմ իշքեց, դրեց ու գնաց հ'ուշապի խեչ, նստավ։

Ցոթն օր թըմեր էր, տղեն էկավ նստավ սահաթըմ էրկու մնաց, պապն ախլավ։ Ախլավ, տղեն ասեց.—Աբո՜, ղու հմա՞լ մալ կպահիս։

Պապն ասեց.—Ի՞նչ է էղի, օր դու զէդ խոսք կասիս։

Ասեց.—Աբո՜, մինակ մանցի, սիրտս նեղեցավ, գացի մտա քու բակի մեջ, տեսա յոթ հ'օդի դուռ կեր։ Հ'օդիմ՝ դուռ բացի մտա ներս, տեսա օր խոտ բերեր էր գելու հ'առեջ, միսն՝ խոշուն ու օշխըրին, ըդ հըմալ ապրուստ հեչ կէղնի՞, անոթից կմեռնին ըդոնք։

Հ'օդիմ դուռ լէ բացի հրեղեն ձիաննու հ'առջև միս էր դրուկ, շներուն ու ուրիշ ջան ու ջանավարներուն՝ խոտ։

Հ'ուշապն կըսե.—Զըմեն հ'օդեք օլըրդա՞ր։

Տղեն կասե.—Չէ՛, մինակ էդ էրկու հ՝օդեն իշքեցի, դարձա էկա։

Հալրու քի հ՝ուշպի միտք տղեն փորձելն է, մախսուս բաց էր թողե, օր հասկներ ուրին աղութին կէնե՞՝ չէնե, օր չէնե, թալե էն մարգերու խեչ։

Կըսե.—Տղա՛, լաո՛, էկո քիչըմ զիմ մուրուք քրթվէ։

Տղեն կիգա կիշքե զպապու մուրուք, ի՞նչ տեսնա աղեկ է։ Ինչ օր աստված ստեղծեր է, իսնից զատ, հ՝ուշպի մուրքի մեջ կա. օձ կհարցուս, կարիճ կհարցուս, գորտ կհարցուս, ճիճերու կհարցուս, օջիլ ու անիծ կհարցուս։ Ի՞նչ։

Տղեն կըսե։ «Ես ի՞նչ ասիմ-չասիմ ըդոր։ Վախենամ ասիմ. ի՞նչ խըդար կզտոտ է քու մուրուք. զիս լէ թալէ էն մարդոց մոտ։ Կանի ասիմ. «Աբո, ի՞նչ խըդար թամիզ է քու մուրուք, քու մո՞ւրքին մեռնիմ»։

Կըսե.—Աբո՛, էդ ի՞նչ խըդար սերսուր է քու մուրուք, քու մուրքին մեռնեմ, անմահութենի հոդ դու գինաս կիգա հ՝ուրնե։

Ըդ ավա օր կըսե, ըդ հ՝ուշապ ուր տեղ կփառավորվի, մուրուք կլիսդրկի։ Հ՝ուշապն կըսե. «Անճախ օր տվեց ընծիկ աստված։ Իմ հարիր տարին թըմեր է, թե եզան միս կերա, թե տղեն բերի ըդա տղեն մինակ ընծի տղութեն կէնե»։

Կըսե.—Տղա՛, լաո՛, ըդա հարիր տարի կընե կզըվըռնիմ, անճախ օր քու պես տղեմ՝ ձեռք բերի, դու իմ հոգեկան տղեն իս, ես լէ՝ քու պապ։ Լուսումութ ես կէլնիմ կէրթամ նեճրութենի, ըս յոթ բալնեք առ քու մոտ, ինչպես օր հ՝ընցած օր գացեր իս տեսի, կէրթաս ու կիգաս, էլ քու տուն է, կշահիս ու կշարաշվիս, ես յոթն օրից սորա կդառնամ կիգամ։

Կէլնա զյոթ բալնեք կիտա տզի մոտ, ինք կէրթա նեճիր։ Յոթ օրեն նոր պիտի հ՝իգա։

Ըդի օր կէրթա նեճիր, տղեն կէլնա կմտնա, հ՝օդեսներու մեջ, տայրեր*, ջանավրներ հ՝ըմենք լեզու կէլնին, ինչ խըդար օր ջուն ու ջանավար կեն հ՝ոդի, մեկ բերան կբոռան ու կաղաղակին, կըսին. «Ի սեր աստծուն էղնի, տղա՛, մզի աղատե ըդա հ՝էսրութենի միջից»։

Ըդահաղ ըդ յապանի մարգեր կըսին.—Գնա էդա հ՝օդի դուռ

---

* Թռչուն (քրդ.) (Ս. Բ.)։

բաց, օր չըս կառնա ղմզի ազատի լէ։ էն տեղ իրեք հատ հրեղեն ձի կա, ընգոնք կսովրցուն քզիկ, իմալ պետք է ազատիս ղմզի։

Կէլնա զդուռ կրանա, կմտնի հրեղեն ձիաննու խեչ։ Ձիանք կըսին.—Հա՜յ կտրիճ, դու էկեր իս, օր զմզի ազատիս, ազատող աստվածն է, սորա դու կէղնիս, թանբիհմ՝ կա կէնեք անկաճ էնիս, օր աղատինք հ՝ուշպի ձեռքեն, թը չէ՝ զքզի լէ կուտե, զմզի լէ։

Տղենն կըսե.—Ի՞նչ է ձըր խրատ, ըսեք տեսնամ։

Կըսին.—Քո՞ւ հետ կառնիս սանտրըմ, քարմանըմ, փարչըմ ձեթ, լեսանըմ ու արծըլիմ՝։ Ինչ խըդար հ՝օդա կան, զըմնու դուռ կբանաս, ղըմեն կէնիս դուրս, կէրթան. օր մեկ բան թողիս հետեվանց մնա ներս, գանգատ կէնին, կասին՝ ֆըլան տեխով ին գացի, կիգա մըր հ՝ետևեն։

Տղեն վազեց էկավ հագստի հ՝օդի դուռ բացեց։ Հ՝ընտրեց ուրին իրեք ձեռք աղեկ, խաս հագիստ, բերեց զգլուխ տվեց արծրթե հ՝աղբրի դեմ՝ էղավ սադա արծաթ, հոնկուց բերեց զարկեց օսկի հ՝աղբրի մեջ՝ էղավ խալիս օսկի։ Աղեկըմ էրկու հ՝աղբրի հ՝առեջ կլողկընա ու կբերի զուր խուրջին, կապեց ձիաննու թարկին ու քաշեց դուրս։

Ձիանք ասին.—Մըր պոչեն իրեքական մազ լէ քաշե՝ դիր քու ծոցք, գնա բա՜ց զհ՝ծդեսներու դռներ, էրե՜ ղըմեն դուրս, սորա էկո հեծի զբոզ ձին ու զմի էրկուս լէ թող դուրս ու հ՝ընկի ճամբախ։

Տղեն գնաց բացեց զհ՝օդեսներու դռներ, զըմեն էրեց դուրս, էկավ զէրկու ձին լէ թողեց դուրս, առավ ուր հետ քարմնի գլուխըմ, սանդրըմ, փարչըմ ձեթ, լեսանըմ ու արծըլիմ՝։ Էկավ ձիու խեչ։

Ձին ասեց.—Կէրթաս, ինչ խըդար անլեզու ու անհոգավոր ամաև լէ կա հ՝ուշպին, զըմեն կշրջիս քիթ ու բերնի վրեն, օր շըրջիս, կէլնին լեզու, գազի կտանին հ՝ուշպին, թե՝ տղեն առավ զձիանք ու փախավ։

Տղեն էկավ զամներ շրջեց վըր քիթ ու բերնին, մոռցավ զբուքլիկ գդալն, չշրջեց քիթ ու բերնին ու զիրեք օտնեն ձին չէրեց դուրս։ Էկավ հեծավ զբոզ ձին, զմեկէլ էրկուս լէ տվեց հ՝առեջ ու քշեց։

Տղեն թըղ էրթա ուր ճամբու հետ, մենք դառնաք վըր հ՝ուշպին։

Հ՝ուշապ տեսավ օր ըդա ուր ջան ու ջանավարներն ին, էկան լըցվան մեջի մեջ, էդա ուր յապանի մարդիկն ին, ձիանքն ին. աչքերն մթնեց։

— Հե՜յ,—ասեց,—աստված, հ՚ըմեն ուրին թըղ էղնի, մինակ զիրեք օտնեն ձին խոզի թողեր ընծի, ի՞նչ կտաներ թըղ տանե։

Հ՚իշտըպով թորկեց էկավ տուն, օր կմտներ ներս, բութլիկ գդալ հ՚էլավ լեզու։ Ասեց.—Տեսա՞ր, քու տղեն իմա՞լ տղա էր, զըմեն էրեց դուրս, զիս ու զիրեք օտնեն ձին մինակ՝ չէրեց դուրս։

Հ՚ուշապն ասեց.—Օրհնյա՜լ է աստված, դուք մանցեք, մեկէլ-դոնք ինծի պետք չին։

Քաշեց զիրեք օտնեն ձին դուրս, հեծավ ու հ՚ընկավ տզի հ՚ետևեն։ Ակյար հրեղեն ձին վեց սահաթվան ճամբա կէրթեր, իրեք օտնեն ձին վեց սահաթվան ճամբեն մեկ սահաթվա մեշ կէրթեր։

Իմալ կէղնի, բոզ ձին տղին ասեց.—Տղա՜, իշքե հ՚ետևանց, էդ անհոգին չի՞ գա հասնի մզի։

Տղեն իշեց հ՚ետևանց։ Ասեց.—Հե՜յ, հրեղեն ձի, մրժկի տեսակ բանըմ կէրևա։

— Հե՜յ,—ասաց,—ես չա՞սի քզի բան չթողիս ներս, իրեք օտնեն ձին թողեր իս ներս, հըմկա զմզի կբռնե,—մեկ լէ ըսեց,—հը՜մ, իշե հ՚էտևդ էկավ, չէկավ, ըդ ի՞նչ էր։

Տղեն իշքեց, ըսեց.—Վալլա՜հի, հ՚ուշապն է ու հաս բըս հաս է։

Ըսեց.—Տղա՜, սանտր թալե։

Տղեն թալեց, սանտր էղավ մեշա ու մեշալըղ։

Զին ըսեց.—Հար իրեք օտնեն ձին հ՚էլնի էդա մեշի միջուց, աստված օղորմած է, մենք էփեի ճամբախ կկտրինք։

Իրեք օտնեն ձին ու հ՚ուշապ պատան ըդ մեշի մեշ։ Էդա դին զարկին, ընա դին կզարկին, հար հ՚էլան մեշի միշեն, տղեն ու բոզ ձին չորս սահաթ գացին։

Զին մեկ լէ ըսեց.—Հա՜յ տղա, իշե՜ հ՚ետևդ, հ՚էլա՞վ մեշի միջուց, չէ՞լավ։

Տղեն իշեց, ըսեց.—Հրեղեն ձի, հրմալ մրժկի պես կէրևա։ Էլավ ու էկավ։

Զին ըսեց.—Թալե՜ լեսան ու արծըլին հ՚ետևանց իմ ետև ու զանկուներդ զարկ։ Տղեն օր արծըլին ու լեսան թալեց, դարձավ մեկ դին փստուկ քար, մեկ դին լէ՝ դաղաշ քար, հ՚ուշպի ձիու օտներ ըրեց շըրա-շըրա։ Հար դուրս էլան ըդ քարերու միշեն, տղեն վեց սահաթվան ճամբախ լէ կտրեց։

Նորեն ձին ըսավ.—Տղա՜, իշե էտևդ էդ անհոգի հ՚ուշապ

չհասնի մզի, օր զմզի հասնի ո՞ր գինա, ինչ օգյաթ հանե մըր գլուխ։

Տղեն իշեց էդև, ասեց.—Մըժկի մը պես էլավ ու կիգա։

Ըսեց.—Տղա՛, ձեթի շատ փայ իմ հ՚ետև լից։ Քիչ փայ իմ հ՚առաջ ու քարմընի գլուխ թալ հ՚օրթոլախ։

Տղեն ձիու ըսածի պես էն քիչ ձեթ ուր հ՚առաջ լըցեց, էղավ պզտիկ ծովըմ, քարմընգլուխ էղավ ջաղցի քարըմ, էգին ձեթ՝ էղավ մեծ ծովըմ։

Ըսավ.—Տղա՛, աչքերդ բռնե, ես լող գինամ, քի հ՚ընցում ջրի էն դին։

Տղեն աչքեր բռնեց, հ՚ընցավ ջրի պռուկ։

Ասեց.—Տղա՛, իջի իմ վրավեն, էլ մզիկ ազատել չկան։ Ազատվիլ էղնի մզիկ հ՚ոդա է, չէղնի՝ հ՚ոդա է։

Իշեց օր հ՚ուշապն ու իրեք օտնեն ձին էկան ջրի պըռուկ կանան։

— Հա՛յ,—ասեց,—բերա՛ղդ տղա, կիգեր թըղ ընծի ըսեր, խաթըրլամա էղնեք ու հ՚իգեր։ Դու էն ըսե, իմա՞լ հ՚ընցար ըդա ջուր էն դին, ըսե՝ ես լէ գամ պագիմ քու աչքերն ու դառնամ հ՚իգամ։

Տղեն ըսեց.—Արո՛, կտեսնա՞ս էն քար օր ջրի պռուկն է, զգլուխս կոխեցի ըդ քարու մեջ, զըկլամն առա ձեռքս, քար զըվրոդավ-զըվրոդավ, էկա ըդա դին, էլա դուրս։

Ուշապն էր, գլուխ կոխեց ըդ քարու ծըկու մեջ, ձիու ուլար փաթեց ձեռքի մեջ, զորեց-զորեց, քարն առավ զինք ու զձին, գնաց ծովու տակ, էլ դուրս չէլավ։

Հրեղեն ձիանք էլան լեզու, ասին.—Տղա՛, աստված ազատեց թե՛ զմզի, թե՛ զքզի, դը՛ քու արևուն արև էրե։

Քաշեց ըդ ձիանու պոչեն իրեքական մազ, դրեց ուր ծոցք ու ձիանք գացին ծովու մեջ, հալվրներ վրը ուրանց։

Տղի վրեն մենակ ուր հասարակ հալվրներ մնաց ու հ՚ընկավ ճամբախ էկավ։

Տղեն էկավ։ Շատ ու քիչ էկավ, հովվիմ՝ ռաստ էկավ։

Հովվին ըսավ.—Ըդա իմ հալվրներ՝ քզի, քու հալվրներ՝ ընծի,—էրկու օսկի փարա լէ տվեց,—ըսեց,—գառըմ կմորթիս, զխաշ կիտաս ընծի։

Հովիվն էլավ ուր հալվրներ տվեց տղին, առավ տղի հալվրներ. Հագավ, գառըմ մորթեց, փոր տվեց տղին։ Տղեն քաշեց գլուխն ու

էլավ էկավ քաղաք։ Էղավ քաջլուկըմ։ Էլավ քաղաք զրվրոդավ էս-դին-էնդին, թագավորի ախչկդեք տեսան, կանչեցին, ասին.—Հա՛յ, Քաջլուկ, դու ի՞նչ մարդ իս, արի մզիկ էղի խազբանդ։

Ջտղեն բերին էրեցին խազբանդ։

Թագավորին իրեք ախչիկ կեր, ամեկ ախչկան լէ մեկ խազ էր։ Պզտիկ ախչկա խազու մեկ աչք քոռ էր։

Տղեն էր, շաբաթըմ տարավ զէդ խազեր արծեցուց, օր որ զօր էրկու մեծ ախչկա խազեր խըլավցավ։ Պզտիկ ախչկա խազ չխլավցավ։ Օրըմ լէ տղեն գանգատ էրեց թագավորի ախչկոց։ Ըսավ.—Էսօր հինգ-վեց օր էկեր իմ, մարդ ընծի հաց չբերե, անոթից կմեռնիմ։

Պզտիկ ախչիկ վերուց ասեց.—Խի՞ բարդասդեք* կտանին ճամբու հետ կուտին՝ չեն տանի հասու։ Դոր էնեք, օրական մեկս առնեք հաց, էրթանք մըր խազրանդին։

Կանչին, բերին զրարդասդեք, ասին.—Հա՛յ, բարդասդե՛ք, դուք հ՝ո՞ւրին մըր խազրանդին հաց չըք տանի, հ՝էսօր հինգ-վեց օր անոթի է։

Ըսին.—Մենք հ՝էնօր օր զխազրանդ վարձեր իք, հաց կառնեք կէրթանք, կտեսնանք օր խազբանդ չկա էնտեղ, ձիավորըմ կա, հրեղե՞ն է, ի՞նչ է. մարդ չգինա կէրթա ու կիգա, կդարցունք հաց կրերինք, հ՝իրկուն նոր կփրցնի խազբանդ կիգա։

Պզտիկ ախչիկ շանորդի կէդնի, կախըլի օր բանըմ կա խազ-բանդի տակ, քուրվրդոց կըսե.—Էկե՛ք հրմալ օրական մեկս առնեք հաց էրթանք։

Էն առաջին օր մեծ ախչիկ հաց կտանե։ Կտանե մեծ ախչիկ, կտեսնա օր էդա ուրանց խազերն է կարծե, ձիավորըմ կէրթա ու կիգա։ Կասե. «Քաջլու պատանքն իմ կարի, ըստհաղ քաջլուն հաց բերիմ»,—կառնե զհացի աման, կդառնա կիգա տուն։

Կիգա, կըսե.—Գացի՛, խազբանդ չգտա, բոռացի-չրոռացի՝ ձեն լէ չտվեց, խարիբ ձիավորըմ կէրթեր խազերու մեջ, կիգեր, վախեցա, առա զհացն ու էկա։

Մեկէլ օր օրթանճա ախչիկ կտանե։ Էն լէ էդպես կիշքե Քաջ-լուկն չկառնա գտնա, կտեսնա, օր կարմիր ձիավորըմ կէրթա-կի-գա, էրկու խազ վիռա կարծին, քոռ խազ հա՛յ կարծե, հա՛յ կիշ-

* Աղախին (քրդ. Ե. Բ.)։

քե ձիավորին, կբոռա-չբոռա. մարդ ձեն չի տա։ Կըսե. «Ք... Քաջ-լուկի պապուն, ըստ հաղուն, Քաջլուն հաց բերիմ ու չիգա տա-նեռ»,—կառնե կդառնա կիգա ետ։

Քուրվըդոց կասե.—Գացի՝ չգտա, ո՞ր դինա, ի՞նչ խանդրկի մեջ պառկեր է ու մանցե։

Օլոր օր ըսդհաղուն պզտիկ ախչիկ կէլնի, կըսե.—Ես կտանիմ։

Կէլնա կառնե հաց ու կիգա։

Կիգա կիջքե օր ձիավորըմ խաղերու մեջն է, օսկի հալվըներ վրեն, օսկի բըռջամ օրորուկ փեճերուն։ Կէրթա խաղերու մեջն ու կիգա։ Էրկու քուրոջ խաղեր կարծին, ուր խաղ՝ չարծե։ Բերամ՝ կարծե, բերամ՝ հայ աչք կտնկե, ըդ ձիավոր թամաշա կընե։

Պզտիկ ախչիկ կըսե.—Էղնի ու չէղնի ըդի Քաջլուկն է, իմ խաղ լէ ըդոր հ՝ապով է օր բը զօր հ՝ետ կէրթա, կմտնի խանդակ ու կդափի մնա։ Կմնա հար սահաթ ութին, ըդի ջըրինդ կէրթա-կիդա, ախչիկ լէ նստուկ կէդնի խանդակ։

Սահաթ ութին կիգա կիջնի ձիուց, փոթեր կհանե դնե ձիու վրեն ու կթորկե ձին կէրթա։

Ըստհաղ թագավորի ախչիկ խանդրկից կէլնա, հաբ կառնե կիգա, կիտա Քաջլուկին։

Ըսավ.—Հա՜յ Քաջլուկ, ըդ ձիավոր ի՞նչ ձիավոր էր՝ կէրթեր մըջ խաղերուն, կիգեր, դու հ՝ո՞ւր էր։

Քաջլուկն ըսավ.—Ըպա ես հոդ իմ էղի, ձիավոր չըմ տեսեր ի, ի՞նչ ձիավոր է։

Ախչիկն ըսավ.—Կըսիս՝ ըսե, չըսիս՝ թագավորին կըսիմ՝ զգլուխդ կզարկա։

Ըսավ.—Ըպա դու քու աչքով տեսի՞ր իս, դինաս ձիավոր որն է, էլ հ՝ո՞րի կհարցուս։

Հոնի ուր էղածն ու չէղածն թաքմիլ ցուցուց թագավորի ախ-չըկան։

Ախչիկն ըսեց՝ վաղ իրեք ձմերուկ կառնինք. մեկ՝ լըղփուկ, մեկ՝ հասուկ ու հ՝ընցուկ, մեկ լէ՝ թաժա հասուկ։ Կզարկինք իրեք չա-խու մեջ, կճամբինք մըր պապուն։ Բալքիմ մզի կարգե. ես զքզի կառնիմ։

Ախչիկ կդառնա կիգա տուն։ Քուրվըդոց խըսա կէնե, ընգոնք լէ ըռազի կէղնին։ Բըլե չըսե, թե ես հրմլա բանմ՝ իմ տեսի։ Իրեք ձմերուկ կառնին, կզարկին քուրվըդինք զուրանց չախըվներ մեջ, կճամբին, կիգա ուրանց պապուն։

Թագավոր կկանչե զուր փաշեքն ու վազիրներ, կըսե.—Եկեք ըդա իմ ախչկդեք իրեք ձմերուկ ին ճամբի ընծի, ամեկ ուր շախուն է զարկի մեջ, ըդ ի՞նչ բան ա, մինչև էսօր էդ բան չեն էրի, մզի մեկ շախու լէ կօգտեր։

Կվերցու վազիրն կըսե.—Թագավո՛ր ապրած, հը՛մ, ես բանըմ ասիմ, տեսնամ իմ խոսքին հավանութեն կիտա՞ք։

Կըսե.—Բի էկո մեծ ախչկա ձմերուկ կիսինք նայինք։

Կբերե կիսե՝ հ՚ընցեր է։

Կըսե.—Թագավո՛ր ապրած, քու ախչիկ հ՚ընցեր է, էդա ձմերուկ էնե կարգելու է։

Կբերե օրթանճին կիսե. էն լէ հ՚ընցեր է ու չընցեր է՝ կարգելու։

Կբերե պզտիկ կիսե, կտեսնա օր թաժա է հասեր, կըսե.—Ըդա լէ քու պզտիկ ախչիկն է, թաժա հասեր է, էղեր է կարգելու,—կըսա,—Թագավո՛ր ապրած, էդ ձմերուկներու մանեն ըդ էր, օր ասի։

Թագավոր կըսե.—Վաղ էղնի իմ ջանին, կիտամ մեկ-մեկ խնձոր մըտ ուրանց, թըղ էլնին կանին փանջարեն, վի՛րն օր զարկին, ընդոր կիտամ։

Առավոտուն էր, թագավոր հրաման էրեց, ըսեց.—Քաղաք-քաղքով թըղ գան, իմ փանջարի տրկով հ՚ընցնին։ Իմ ախչկներ վիրն օր խնձոր զարկին, կիտամ ընդոր։

Էկան փանջարի տրկով հ՚ընցան։ Մեծ ախչիկ խնձոր զարկեց Շեխ խալամի տղին, օրթանճին՝ Վազիրի տղին։ Պզտիկ որ մեկ էկավ, քաղաք-քաղքով հ՚ընցավ՝ չզարկեց։

Թագավորն ըսավ.—Էլ մարդ մանցե՞ր է։

Ըսին.—Քու խազբանդ մինակ մանցեր է։

Ըսեց.—Զէն էլ բերեք թըղ հ՚ընցնի։

Բերին հ՚ընցուցին։ Պզտիկ ախչիկ զուր խնձոր թալեց, առավ խազբանդի գլխուն։

Ասին՝ էգի խալադով քիսավ, չէղավ։ Մեկ լէ բերեք հ՚ընցուցեք։

Բերին քաղաք-քաղքով հ՚ընցուցին, նորեն մեկի չզարկեց։ Քաջլուկի գլխուն զարկեց պզտիկ ախչիկ զուր խնձոր։

Իրեք անգամ ըդ հըմլա փրոովա էրին, իրեք անգամ լէ քաջլուկի գլխուն զարկեց։

Խաբար տվին թագավորին, թե՝ «Զասիս, քու պզտիկ ախչիկ թազբանդի գլխուն զարկեց զուր խնձոր»։

Թագավոր ըսավ.—Ուր մուր, ուր էրես։ Տարեք դուրս թալեք ավայի մը, թողեք արեք։

Էկան էրկու ախչիկն՝ մեծ ու մեծի պզտիկ, տվին դրհոլ ու զուռնեն զարկին, քեֆ ուրախութեն էրին, պսակեցին։ Էղավ օր հ'ընցավ վախտըմ, թագավոր հ'ընկավ հիվանդ, դեղ ցուցուցին, առյուծի կաթ ըսին, ո՛ր կէրթա, ո՛ր չէրթա, ըսին փեսեք մեկ լէ կէրթան բերին, որ կէրթա։

Էլավ տվեց թարուրըմ ասքյար, օսկի ու արծաթ, էլան ջուխտակ փեսեն գացին։

Քաշլուկն կնկան ասեց.—Կնի՛կ, էլի գնա քու պապուց խնդրվի, բալքիմ ծրոտոտ քուռակըմ լէ ընծի իտա։

Ախչիկ էլավ էկավ, պապուն ըսավ։ Պապ հերսոտավ, ըսեց.—Հ'ըմեն գացին, չբերին, ըստհաղ Քաշլո՞ւկ պիտի էրթա բերի։

Ախչիկ յալվարմիշ էղավ։

Ըսաց.—Լառ՛, զաթի ես քու դարղեն իմ հիվնդցի, իմ աչքի հ'առջևեն քաշվի՛ գնա՛, քանի չըմ հ'էլեր ի կանի տեխես։

Ախչիկ օր գնաց, կանչեց թավլաճին, ըսեց.—Գնա՛ ծրոտոտ ձիմ՝ տուր, թըղ հեծնի էրթա։

Տվեց ծրոտոտ քուռակըմ, տղեն հեծավ, որն օր թրիք կզարկեր, որն օր խեճ կզարկեր, քաղքեն էլավ դուրս։ Քաղքեն էլավ դուրս, ծրոտոտ քուռակ կապեց էն տեխ փրշբուլըմ, մազ տվեց կրակ, հրեղեն ձին էկավ, հալվըներ վրեն։ Հագավ զուր շորեր, հեծավ զուր ձին ու գնաց։

Գնաց, գնաց, տեսավ օր էրկու-իրեք չադրը կեն զարկուկ ըդ տեխ։ Քաշեց ձիթրենի կաթ, լըցեց շուշիմ մեջ, գնաց էդ էրկու չադրընու մոտ, օր թագավորի փեսեքն ին։

Ասեց.—Բարև՛ ձի ախպրտանք, դուք հ'ո՞րին իք էկի։ Ըդա տեխ քեֆ ուրախութեն կէնեք։

Ըսին.—Քու մոտեն պահինք, աստծուց ի՞նչ պահինք։ Մըր աներ թագավոր է, հիվնդցեր է, փայից էլեր է, առյուծի կաթ կուզե, օր խմե՝ սաղնա, էղնի տրսնուհինգ տարեկան ջրհել։

Ըսեց.—Առյուծի կաթ իմ խեչ կա, կծախիմ, չը՞ք առնի։

Կըսին.—Օր դու կծախես, մըր կյանք լէ չընք խնայի։

Կըսե.—Ես փարով չըմ իտա։ Ձինե լէ բան չըմ ուզի։ Ձըր չադ-

րի դուռ լէ կդնիմ։ Մեկ-մեկ դաղմա կզարկիմ հ՚ո..., ձի կիտամ, առնեք էրթաք։

Կէլնան էրկու բաճանախ խոսքերնին կէնին մեկ։ Կիտան դաղմիլ զհ՚ո... ուրանց, կառնին ու կդառնան կիգան։ Էնդոնք կբառնան զուրանց չադրներ։

Զին կէլնի լեզու, կըսե.—Տղա՛, ես դորվի գացի, էնդիով կըքշիս։ Զէղնի զիմ գլուխ գարձուս, ես կէրթամ առյուծի խեչ, կէլնիմ դուրս։

Կէրթա-կէրթա։ Ինչ օր ըսիմ, կէրթա Մշու Ս. Կարապետի մեշեն կէլնի դուրս։

Կէրթա, կտեսնա, օր առյուծ հա՛նդ է պառկուկ ծառու տակ։ Զենմ՚ հ՚էրկինքն է, մեկ գետին։

— Հե՛յ,—կըսե,—ես ինչպե՞ս էնիմ։

Զին կըսե.—Ըդոր օտք քարխեց է էղեր։ Զա՛րկ դիր ու կապանով թըղ փըսխի, հ՚առջին հեղ չէլնիս ուր հ՚առեջ, զքդի կէնե կտորկտոր։ Ըռաթի, խըլըսի, սորա հ՚էլի ուր հ՚առեջ, ինչ օր ուզես՝ կիտա։

Զիու ասածի պես կէնե, օր առյուծի օտք կըռհաթի, տղեն ըլի միջեն թռնա հ՚էլնի, կըսե.—Ե՛ս իմ զարկի, առյուծ։

Կըսե.—Ուզե՛ իտամ, մեկ տղա ունիմ, ուղիս կիտամ։

Տղեն կըսե.—Քու տղեն աստված պահե, ես էկիր իմ, թագավոր հիվանդ է, զքու կաթ ցուցուցեր ին դեղ, էկեր իմ կտանիմ։

Առյուծ կըսե.—Ըդի՛ հեչ, ուրի՛շ բան ուզե, կտրի՛ճ, իմ կաթ մինակ չսաղցու. ես անմահութենի ջուր ունիմ, պետք է խառնիս իմ կաթի հետ, խմցուս օր սաղնա։ Անմահութենի ջուր խմե՝ կէղնի տրսնուհինգ տարեկան, կաթ լէ խմե՝ կսաղնա։

Կէլնի ջուշեմ՚ հոնկուց, մեկ հոնկուց կըլնա, կիտա։ Տղեն կառնե ու կդառնա կիգա։ Կիգա քաղքի կուշտ, ծըռտոտ ձին հոն է, զուր ձին կթորկե կէրթա, Քաշլուկն կքաշե գլուխ, կհեծնի ու կիգա։ Էն օր շարխ կզարկե, էն օր թրիք, կիգա կզնելով, փախնելով կմտնի ուր տուն։

Թագավորի փեսեք օր կբերին կխմցուն զդեղ թագավորին, լեշ զկաշին կթորկե, դհա կգիշնա։ Կմնա, իրկուն օր կէղնի, առաջին կրսե.—Էլի՛, էդա ջուշեսներուց մեկ ըսդաքյան ջուր, մեկ ըստաքյան կաթ լի՛ց, տա՛ր տուր քու հոր, թըղ խմե։ Ասե. «Էդա լէ քու. Քաշլուկ փեսեն է բերիր»։

Աղջիկ կառնե կիգա։ Յալվարմիշ կէղնի.—Դու ու քու անանուն աստված, գեշ-գեշ՝ էդա լէ քու Քաջլուկ փեսեն է բերի, իմե բալքիմ աղեկնաս։

Ըգավա օր կըսե աղջիկ, թագավոր կառնե, կխմե։ Կրսե։—Օ՜խ, լառ՛, ես ըռհաթա, իմ բեն ըացվավ, սաղցա, կէղնի՞ օր ըստաքյանըմ լէ բերիս։

Աղջիկ կրսե.—Դու ինչ խըդար խմես, էն խըդար կա, կէրթամ կբերիմ։

Աղջիկ օր կէլնա, կէրթա իրկա տուն, կըսե.—Իմ հեր է՛լ կուզե ըդ ջրից։

Իրիկ կըսե.—Ջուր զուր փեսեք՝ ուր Շեխ իսլամն ու Վազիրն չկանչե՝ չըմ իտա, եբոր կանչեց, ես իմ ձեռքով կառնիմ, կիգամ էնտեխ։

Ախչիկ կէրթա հոր կըսե։ Թագավոր կկանչե զփեսեք բերե, նոր կառնե կաթ կիգա։

Բայան կէնե, որ փեսեք զինք խաբեր ին, կցուցու զուր դաղմեք։ Կբերե կաթ ու ջուր կխմցու։ Թագավոր կէղնի տըսնուհինգ տարեկան խորթըմ, կէլնի, կանի։